«NEW GENERATION» Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

ԺԱՄԱՆԱԿԻՆ ՀԱՄԱՔԱՅԼ #27

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ

Ժամանակին Համաքայլ ամսագիրը պարունակում է տվյալ ամսում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված գործունեության համապարփակ նկարագիրը:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես լրատվամիջոցները կարող են նպաստել խտրականության նվազեցմանը

«Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները», «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը»

«ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը, Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը» Սեմինար դասընթաց Գյումրի քաղաքում

ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը, Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը



«ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը, Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը» Սեմինար դասընթաց Վանաձոր քաղաքում

Գույնզգույն խոհանոց»-ի առաջին հանդիպումը

Այցելություն Գերմանիա

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

Սիրով ցանկանում ենք տեղեկացնել, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) հետազոտությունից բացի հուլիսի 1-ից հնարավոր կլինի նաև անվճար հետազոտվել ՀԵՊԱՏԻՏ Բ-ի վերաբերյալ:

Եղե՛ք առողջ

Ինչպես լրատվամիջոցները կարող են նպաստել խտրականության նվազեցմանը

2017թ.-ի մայիսի 26-ին և 27-ին Շիրակի մարզի Գյումրի քաղաքում «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի կողմից կազմակերպվեց լրագրողների և բլոգերների համար նախատեսված երկօրյա դասընթաց՝ «Սեռականություն, ՄԻԱՎ, ՄԻԱՎ և մարդու իրավունքներ» թեմաներով:
Դասընթացի առաջին օրը ծրագրի օգնական Արտյոմ Մովսեսյանը ներկայացրեց «Առողջության իրավունք» ծրագրի նպատակները, խնդիրներն ու արդյունքները: Որից հետո փորձագետներ Էլվիրա Մելիքսեթյանը և Ալիկ Ուստյանը տվեցին սեռականության սահմանումը և ներկայացվեց դրա բաղադրիչները:
Ներկայացվեց նաև ԼԳԲՏԻՔ+ անձանց մասին նյութերի լուսաբանման էթիկական կողմը: Այնուհետև խոսվեց կենսաբանական սեռերի մասին՝ շեշտը դնելով ինտերսեքս անձանց վրա: Ներկայացվեցին նաև սեռական կողմնորոշման, նրա տեսակների, սեռական ինքնության և սեռական վարքագծի տարբերությունները: Որին հաջորդեց խմբային աշխատանք «Գենդեր. Ի՞նչ է դա» վերնագրով, որի նպատակն էր ստուգել մասնակիցների գիտելիքները վերը նշվածի վերաբերյալ: Փորձագետները տվեցին նաև գենդերի, գենդերային ինքնության, գենդերային դերի և գենդերային արտահայտման սահմանումները և տարբեր մեխանիզմներով մասնակիցներին ներկայացվեց նաև Գենդերների բազմազանությունը՝ իր բոլոր կոմպոնենտներով:

Դասընթացի երկրորդ օրը սկսվեց «Ճիշտ տերմինաբանությունը խտրականության նվազեցման գործոն» վերնագրով խմբային աշխատանքով, որը անցկացրեց ՄԻԱՎ-ի գծով փորձագետ Լևոն Չիլինգարյանը: Լ. Չիլինգարյանը մասնակիցներին ներկայացրեց ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը, ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիները և թեստավորման կարևորությունը, որին հաջորդեց վիճակագրական տվյալների ներկայացումը: Այնուհետև փորձագետ Հայկ Հայրապետյանը խոսեց մարդու իրավունքների համընդհանուր հասկացության, ՏՍՏ և Տրանս* անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների, ներպետական և միջազգային իրավական մեխանիզմների մասին:
Դասընթացի բոլոր մասնակիցները շատ հետաքրքրված էին թեմաներով և ակտիվ էին բոլոր քննարկումների ժամանակ:

ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը, Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը

«ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով դասընթաց Երևանում

IDAHOT 2017 միջոցառումների շարքը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն ավարտեց 2017թ.-ի մայիսի 21-ին «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում մեկօրյա սեմինար-վարժանքով՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով:Սեմինարի նպատակն էր նպաստել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը՝ բարձրացնելով իրազեկվածության մակարդակը և բացահայտելով թեստավորման կարևորությունը ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների մասին:

Մասնակիցները ծանոթացան ՄԻԱՎ և ՁԻԱՀ տերմինների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերության, փոխանցման ուղիների և կենսական հեղուկների, պահպանակների ճիշտ օգտագործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորության մասին:

Այնուհետև ներկայացվեցին մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, մարդու իրավունքների զարգացման փուլերը և անդրադարձ կատարվեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի դրույթներին:

«Անձի իրավական կարգավիճակը իրավապահ մարմիններում» թեմայի շրջանակներում մասնակիցները ծանոցաթացան իրավապահ մարմինների կատարած խախտումների և տեսական գիտելիքներ ստացան ոստիկանության հետ շփման ու քաղաքացիների իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ:
Մասնակիցները ստացած տեսական գիտելիքները կարողացան գործնական օրինակների հիման քննարկել խմբային խաղերի ու աշխատանքների, մտքերի փոխանակման և հարց ու պատասխանի միջոցով:

Գույնզգույն խոհանոց»-ի առաջին հանդիպումը

2017 թվականի մայիսի 30-ին տեղի ունեցավ «Գույնզգույն խոհանոց»-ի առաջին հանդիպումը:
«Գույնզգույն խոհանոց»-ի նպատակն էր երիտասարդներին միավորել մեկ վայրում, որպեսզի նրանք ծանոթանան միմիյանց հետ, կիսվեն համեղ ուտելիքներ պատրաստելու իրենց յուրահատուկ բաղադրատոմսերով, զրուցեն առօրյայի և ամենատարբեր հարցերի մասին:
Հայտարարությունը բաց էր. յուրաքանչյուրը կարող էր գրանցվել և մասնակցել:
Երիտասարդները պատրաստել են յուրահատուկ ուտեստներ, դեսերտներ: Կարելի էր նկատել, որ նրանք թիմային մոտեցում էին ցուցաբերում՝ աշխատելով օգնել իրար, ինչը շատ ոգևորող էր: Հետաքրքիր էր նաև այն, որ ոմանք եկել էին սովորելու, թե ինչպես են պատրաստում, օրինակ, պիցցան, մակարոնից պաստա, բլիթներ և այլն:
Պատրաստելուց հետո բոլորը նստեցին մեկ սեղանի շուրջ և իրենց պատրաստած ուտեստներն ու դեսերտները վայելելուն զուգահեռ սկսեցին նոր գաղափարներ ներկայացնել:
ՆՍՀԿ նախագահ Սերգեյ Գաբրիելյանը ևս միացավ մասնակիցների կողմից պատրաստված ուտեսների սեղանին: Լսելով նոր գաղափարները՝ Ս.Գաբրիելյանը նշեց, որ երիտասարդները ազատ են հանդես գալու նոր նախաձեռնություններ իրականացնելու գաղափարներով՝ օգտագործելով գրասենյակի ռեսուրս կենտրոնի տարածքը կամ ֆինանսական աջակցությունը:
ՆՍՀԿ գրասենյակի օգնական Լևոն Չիլինգարյանը նախաձեռնության ավարտին վկայականներ հանձնեց մասնակիցներին տարբեր անվանակարգերում:
Մասնակցության հայտերը բավականին շատ են եղել, այդ իսկ պատճառով կազմակերպիչները որոշեցին պարբերաբար կազմակերպել «Գույնզգույն խոհանոց»՝ այն համալրելով նոր բաղադրատոմսերով, մասնակիցներով և նոր գաղափարներով:
Բոլորը լիահույս էին, որ հեռանկարում համադրությունը կդառնա ավելի ինտերակտիվ, ընդգրկելով կազմակերպելով դասընթացներ:

«Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները», «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը»

2017 թվականի հունիսի 15 «Նոր Սերունդ» Մարդասիրական և հասարակական կազմակերպությունը ՀԿ-ի կողմից իրականացվող «Կրթության իրավունք» ծրագրի շրջանակներում Տրանս* համայնքի ներկայացուցիչների համար անցկացվեց հերթական դասընթացը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ում: Դասընթացի թեմաներն էին «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» և «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները»:

2017 թվականի հունիսի 15 «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ի կողմից իրականացվող՝ «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում Տրանս* համայնքի ներկայացուցիչների համար անցկացվեց հերթական դասընթացը «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ում: Դասընթացի թեմաներն էին «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» և «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները»: Մասնակիցներին խմբում ինտեգրելու նպատակով հանդիպումը սկսվեց ինտերակտիվ ծանոթացումով: Մասնակիցներին ներկայացվեց մարդու իրավունքների հասկացությունը, դրանց պաշտպանության միջազգային և ներպետական մեխանիզմները, մարդու իրավունքների Եվրոպական դատարան դիմելու կարգն ու պայմանները: Տրվեց ՄԻԱՎ-ի վերաբերյալ օրենսդրական կարգավորումների մեկնաբանությունը և ներկայացվեց ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց տրված արտոնությունների շրջանակը: Դասընթացավարի օգնությամբ մասնակիցները փորձեցին սահմանազատել մարդու իրավունքների խախտման դեպքերը սովորական հանցագործություններից: Անդրադարձ կատարվեց նաև «Խտրականություն» հասկացությանը, դրա հիմքերին և տեսակներին, որին հաջորդեց «Փոխհարաբերությունների անհատական ցանց» ինտերակտիվ խաղի անցկացումը: Խաղի միջոցով վեր հանվեցին լսարանում հնչեցված խտրական կարծիքներն ու կարծրատիպերը, և հնարավորություն տրվեց մասնակիցներին [illegible] վերանայելու իրենց հայացքները մարդկանց որոշակի խմբերի նկատմամբ խտրականություն դրսևորելու հարցում: Սեմինարի ավարտին «Նոր Սերունդ» մարդասիրական ՀԿ-ի իրավաբան Անահիտ Մկրտչյանը մասնակիցներին տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև մասնակիցների շրջանում իրականացվեց ակտիվիստների քարտեզագրում, որի նպատական է ստեղծել SUS և Տրանս* համայնքների ակտիվիստների բազա ՝ իրավապաշտպան գործունեության, մասնավորապես մոնիթորինգի և առողջապահության ոլորտում իրավունքների խախտման դեպքերի փաստագրման մեջ համայնքներին ակտիվ ներգրավելու համար: Նշենք, որ սեմինարը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ների համագործակցությամբ իրականացվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի կողմից:

«ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը, Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը» Սեմինար դասընթաց Գյումրի քաղաքում

2017 թվականի հունիսի 17-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը SUS-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավուքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով: Սեմինարի ընթացքում [illegible] ՄԻԱՎ և ՁԻԱՀ տերմինների, ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի տարբերության, փոխանցման ուղիների և կենսական հեղուկների, պահպանակների ճիշտ օգտագործման, ՄԻԱՎ-ի վերաբերյալ հետազոտություն անցնելու կարևորության մասին, այնուհետև ներկայացվեցին մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները, մարդու իրավունքների զարգացման փուլերը, ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերը, ինչպես նաև անդրադարձ կատարվեց «ՄԻԱՎ-ից առաջացած հիվանդության կանխարգելման մասին» ՀՀ օրենքի [illegible]ւյթներին:

«Անձի իրավական կարգավիճակը իրավապահ մարմիններում» թեմայի շրջանակներում մասնակիցները ծանոցաթացան իրավապահ մարմինների կատարած խախտումների և տեսական գիտելիքներ ստացան ոստիկանության հետ շփման ու քաղաքացիների իրավունքների խախտումների դեպքերի վերաբերյալ:
Մասնակիցները ստացած տեսական գիտելիքները կարողացան գործնական օրինակների հիման քննարկել խմբային խաղերի ու աշխատանքների, մտքերի փոխանակման և հարց ու պատասխանի միջոցով:
Սեմինարի ավարտին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբանը մասնակիցների տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն:

Այցելություն Գերմանիա

2017 թվականի հունիսի 19-26-ը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի աշխատակազմը և այլ ՀԿ-ների ներկայացուցիչներ «Երիտասարդություն» միության պաշտոնական հրավերով կրթական այց կատարեցին Բավարիա:

Այցի ընթացքում ռուսախոս գերմանացի գործընկերները մեզ համար հանդիպում կազմակերպեցին տեղի ”Bayerischer Jugendring” երիտասարդական կազմակերպության հետ, որի ընթացքում քննարկվեցին երիտասարդական ծրագրերի իրականացման եղանակները, Գերմանիայի փախստական երիտասարդների առկա խնդիրները և կազմակերպության կողմից տրամադրվող աջակցության ձևերը: Տվյալ խնդրի շրջանակներում հանդիպում կազմակերպվեց նաև տեղի

Այնուհետև տեղի ունեցավ հանդիպում ”Munich-Kiev Queer” կազմակերպության կամավոր Կոնրադ Բրեյերի հետ, ով ներկայացրեց Բավարիայի ԼԳԲՏ+ համայնքի խնդիրները և վերը նշված ծրագրի նպատակները, որին հաջորդեց «Մյունխենի ՄԻԱՎ-ի օգնություն» կազմակերպության հետ հանդիպումը, որտեղ մանրամասնորեն ներկայացվեցին իրենց կողմից իրականացվող ծրագրի եղանակները:
Յոթօրյա այցի ժամանակ հայ մասնակիցներին հնարավորություն տրվեց նաև այցելել մի քանի քաղաքներ, ծանոթանալու բավարիական հին և արդի մշակույթի հետ:
Այցելության վերջին երեք օրերը անցկացվեցին Բավարիայի Հանրապետության Վայդենբերգ քաղաքում, որտեղ հայաստանյան մասնակիցների կողմից կազմակերպվեց մշակութային երեկո՝ ռուսախոս գերմանացի մասնակիցներին հնարավորություն տալով ծանոթանալու հայկական

Այնուհետև մի ամբողջ օր բոլոր մասնակիցները մշակեցին հետագա իրականացվող ծրագրերի գաղափարները, գործողությունները և ակնկալվող արդյունքները:

Ծրագիրն ավարտվեց բոլոր մասնակիցների դրական տպավորություններով ու կարծիքներով, ինչը հնարավորություն տվեց բարելավել առաջիկա ծրագրերի կազմակերպման հնարավորությունները:

Հունիսի 26-ին հայաստանյան մասնակիցները մեծ ոգևորվածությամբ, լավ հիշողություններով և նոր գիտելիքներով վերադարձան Հայաստան:



«Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը»

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն մշտապես կարևորել է մարդկանց ինչպես ՄԻԱՎ-ի, այնպես էլ մարդու իրավունքների վերաբերյալ իրազեկելը և հասարակության տարբեր ներկայացուցիչներին նոր գիտելիքներ փոխանցելը: Այդ նպատակով 2017թ. հունիսի 15-ին Երևանում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն կազմակերպել էր հերթական սեմինարը «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը» թեմայով SUS համայնքի ներկայացուցիչների համար: Սեմինարին մասնակցում էին տարբեր տարիքի մասնակիցներ, ինչը ավելի էր հետաքրքրացնում սեմինարի ընթացքում քննարկումները:

Սեմինարը վարում էր ՆՍՀԿ իրավաբան Լուսինե Նալբանդյանը: Սեմինարի սկզբում մասնակիցների հետ ծանոթացման խաղից հետո Լուսինեն ինտերակտիվ եղանակով պարզեց ներկաների՝ իրավունք հասկացության վերաբերյալ ունեցած պատկերացումները: Մասնակիցները ակտիվորեն ընդգրկվեցին քննարկման մեջ և յուրաքանչյուրն արտահայտվեց իր իրավաընկալման մասին: Իրավաբանը ներկայացրեց նախ մարդու իրավունքների ընդհանուր հասկացությունը, այնուհետ ներկայացրեց անձի բնական իրավունքները «Բնական և պոզիտիվ իրավունքները ծառի տեսքով» վիզուալ գծապատկերի միջոցով և բացատրեց դրանց փոխհարաբերակցությունը: Սեմինարի ընթացքում մասնակիցները քննարկեցին մարդու հիմնարար ազատությունները և կարևորագույն անձնական իրավունքները, մասնավորապես ծանոթացան կյանքի իրավունք, աշխատանքի ազատ ընտրության իրավունք, ընտանիք կազմելու ազատ իրավունք, խոշտանգումների արգելքը՝ որպես բացարձակ սկզբունք և այլ մի շարք հասկացություններին: Օգտակար էր նաև, որ վկայակոչվեցին ներպետական և միջազգային մի շարք իրավական ակտեր, որոնք ամրագրում են անձի հիմնական իրավունքները:

Սեմինարի ընթացքում մասնակիցները լրացրեցին նաև «Փոխհարաբերությունների անհատական ցանց» հոգեբանական խաղը, որը վեր հանեց յուրաքանչյուրի սուբյեկտիվ մոտեցումը խտրականության վերաբերյալ:

Սեմինարը ավելի բովանդակալից դարձավ, երբ նաև ներկաներին ներկայացվեցին իրավունքների պաշտպանության մեխանիզմները՝ ինչպես ներպետական մարմիններին դիմելու, այնպես էլ միջազգային եղանակով: Դատական եղանակով իրավունքների պաշտպանության մեջ հատկապես [illegible]ամասն ձևով ներկայացվեց Մարդու [illegible]ունքների եվրոպական դատարանը, որը պատմում էր, թե որ պարտադիր պայմանների բավարար լինելու պարագայում է ՄԻԵԴ-ը գործն ընդունում դատարան: Իրավաբանը ներկայացրեց մի քանի դատական նախադեպեր, որոնք ՄԻԵԴ-ը ընդունել է, և որոնք ունեն մեծ պրակտիկ նշանակություն:

Ինչ վերաբերում է «ՄԻԱՎ-ն ու մարդու իրավունքները» թեմային, ապա մասնակիցները պատմեցին, որ իրականում շատ են հանդիպում մարդիկ, որոնք ՄԻԱՎ-ով են ապրում, սակայն շատ հաճախ խտրական վերաբերմունքի են արժանանում:

Հետաքրքրական էր այն փաստը, որ սեմինարի սկզբում և վերջում ՄԻԱՎ-ի վերաբերյալ նրանց կողմից լրացված թեստերի արդյունքները ընդհանուր առմամբ բավարար էին: Ներկաները ծանոթացան ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքներին և պարտականություններին, տեղեկացան, որ ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ ազատված են զինվորական ծառայությունից: Սեմինարի ավարտին մասնակիցները ստացան իրավաբանական խորհրդատվություն, ինչպես նաև մասնակիցների շրջանում իրականացվեց ակտիվիստների քարտեզագրում, որի նպատակն է ստեղծել SUS և Տրանս* համայնքների ակտիվիստների բազա՝ իրավապաշտպան գործունեության, մասնավորապես մոնիթորինգի և առողջապահության ոլորտում իրավունքների խախտման դեպքերի փաստագրման մեջ համայնքներին ակտիվ ներգրավելու համար:

Նշենք, որ սեմինարը կազմակերպվել էր «Նոր Սերունդ» Մարդասիրական և «Իրավունքի Կողմ» Իրավապաշտպան ՀԿ-ների համագործակցությամբ իրականացվող «Առողջության իրավունք» ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է Տղամարդկանց Առողջության Եվրասիական Կոալիցիայի կողմից:

ՄԻԱՎ / ՀԵՊԱՏԻՏ Բ / ՍՃՓՎ ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ

+374 60 378989

infongngo@gmail,com

http:// www.ngngo.net

«ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը, Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը»

2017 թվականի հունիսի 29-ին «Նոր Սերունդ» Մարդասիրական Հասարակական Կազմակերպությունը «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքում իրականացրեց մեկօրյա սեմինար-վարժանք՝ «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը, ՄԻԱՎ-ի թեստավորման կարևորությունը», «Մարդու իրավունքներն ու ՄԻԱՎ-ը», «Մարդու իրավունքների հասկացությունը և պաշտպանության մեխանիզմները» թեմաներով:

Սեմինարի նպատակն էր նպաստել ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելմանը երիտասարդների շրջանում՝ բարձրացնելով նրանց իրազեկվածության մակարդակը և բացահայտելով թեստավորման կարևորությունը ՄԻԱՎ-ի վերաբերյալ, ինչպես նաև բարձրացնել հասարակության իրազեկվածության մակարդակը մարդու իրավունքների, ինչպես նաև ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց իրավունքների մասին:

Մասնակիցները ստացած տեսական գիտելիքները կարողացան գործնական օրինակների հիման քննարկել խմբային խաղերի ու աշխատանքների, մտքերի փոխանակման և հարց ու պատասխանի միջոցով: Սեմինարի ավարտին «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավաբանը մասնակիցների տրամադրեց իրավաբանական խորհրդատվություն:

Հարգելի ընկերներ

Սիրով ցանկանում ենք տեղեկացնել, որ «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի և ՁԻԱՀ-ի կանխարգելումը և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը ՏՍՏ-ների շրջանում Շիրակի, Լոռու մարզերում և Երևան քաղաքում» ծրագրի շրջանակներում ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող վարակների (ՍՃՓՎ) հետազոտությունից բացի հուլիսի 1-ից հնարավոր կլինի նաև անվճար հետազոտվել ՀԵՊԱՏԻՏ Բ-ի վերաբերյալ:

Եղե՛ք առողջ